



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ 37-ՐԴ ՆԱՏԱՇՐՋԱՆԸ ՄԱՅԻՍ 15-ԻՆ ԵՒ 16-ԻՆ

Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Ազգային Երեսփոխանական Ժողովը, նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, այսօր, Ուրբաթ, 15 Մայիսի յետմիջօրէին կը սկսի իր աշխատանքներուն ու կը շարունակուի Շաբաթ, 16 Մայիսին, Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ, հիւրընկալութեամբ Սան Ֆրանսիսքոյի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգաբարձութեան:

Օրակարգի վրայ է մեր եկեղեցիներու, վարժարաններու եւ առհասարակ ազգային կեանքի տարբեր կալուածներուն մէջ տարուող աշխատանքներուն ընթացքն ու արդիւնքը: Յաւելեալ մանրամասնութիւններ՝ հետագային:

### 37<sup>TH</sup> PRELACY REPRESENTATIVES ASSEMBLY CONVENES

On the afternoon of Friday, May 15<sup>th</sup>, the 37<sup>th</sup> Prelacy Representatives Assembly convened at the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall, presided over by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. This year’s Assembly is being hosted by the Board of Trustees of St. Gregory Church of San Francisco.

The two-day Assembly will assess the activities of the Religious Council, Executive Council, parishes, schools, and committees of the past year and draft future plans.

Details of the Assembly to follow.

\*\*\*

### ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Ազգային Երեսփոխանական Ժողովի 37րդ նստաշրջանի նախօրեակին, Չորեքշաբթի, 13 Մայիս 2009ի առաւօտեան ժամը 10:30ին, Էնսիւնոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ «Եղիա Սարաֆեա» Դահլիճէն ներս տեղի ունեցաւ հոգեւորականաց միօրեայ համագումար, նախագահութեամբ Թեմիս

բարեխնամ Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի, եւ մասնակցութեամբ Թեմիս միաբան հայրերուն եւ քահանայից դասուն: Համագումարին հիւրաբար ներկայ էր նաեւ Ս. Աթոռոյս երեց միաբաններէն եւ Թեմիս նախկին առաջնորդներէն՝ Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապազեան:



Համագումարէն առաջ Եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ Գիշերային ժամերգութիւն: Արարողութեան աւարտին, հոգեւոր խորհրդաձուլութեան պահը առաջնորդեց Առաջնորդ Սրբազան Հայրը, վեր առնելով Բ. Կորնթացիներու 4րդ գլուխը, ուր Պօղոս Առաքեալ կը քաջալերէ բոլորին երբեք չթուլնալու

հաւատքի մէջ եւ նեղութեանց համբերելու, որովհետեւ «Ներկայի մեր կրած այս թեթեւ նեղութիւնը արտակարգօրէն գերազանց եւ յաւիտենական փառք մը կ'ապահովէ մեզի»: Սրբազան Հայրը յիշեցուց, թէ «մենք մեր ծառայական կեանքին մէջ նեղութիւններ ու դժուարութիւններ կ'ունենանք, բայց երբեք մեր յոյսին մէջ պետք չէ թուլնանք ու մեր հաւատքին մէջ երբեք պետք չէ տկարանանք»:

Ժամը 11:30ին համագումարը սկսաւ իր աշխատանքներուն: Առաջնորդ Սրբազան Հայրը նախ ողջունեց բոլոր հոգեւոր հայրերը, գնահատեց անոնց նուիրումն ու մատուցած ծառայութիւնը հոգեւոր մարզէն ներս, եւ մաղթեց, որ ժողովական այս օրը ընթանայ հեզասահ եւ պտղաբեր: Սրբազանը գնահատեց նաեւ հիւրընկալ եկեղեցւոյ հոգեւոր հովիւն ու հոգաբարձութիւնը: Ապա, Թեմական աշխատանքներու համապարփակ ներկայացումը կատարեց, սկսելով հոգեւոր-արարողական կեանքէն, ժողովուրդին հետ քահանայից յարաբերութենէն, անցնելով երիտասարդաց խմբակներու եւ կիրակնօրեայ վարժարաններու աշխոյժ գործունեութեան, Թեմա երիտասարդ ու պատրաստուած նոր քահանաներով օժտելու աշխատանքներուն մասին:

Քաջալերական խօսքերով հանդես եկաւ Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապազեան, որ նախ շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, իրեն տուած այս հրաւերին համար, ապա կոչ ուղղեց քահանայ հայրերուն, որ համախումբ աշխատանքով կարենան լաւագոյնս յագուրդ տալ ժողովուրդի հոգեւոր ու ազգային պահանջներուն: Ապա, Սրբազանը յաջողութիւն մաղթեց բոլորին եւ ժողովական կեանքին, եզրակացնելով՝ որ միասնաբար գործելը գրաւականն է յաջողութեան:

Ա. Նիստի ընթացքին, ներկայացուեցաւ Ազգային Երեսփոխանական Ժողովին ներկայացուելիք Կրօնական Ժողովի տարեկան տեղեկագիրը, որ ենթարկուեցաւ անհրաժեշտ բարեփոխութեանց:

Կեսօրին, սիրալիր մթնոլորտի մէջ, տեղի ունեցաւ սիրոյ ճաշ:

Համագումարի երկրորդ նիստը սկսաւ յետ միջօրէին: Հայր Պարթեւ ներկայացուց դասախօսութիւն-գրոյց մը, նիւթ ունենալով՝ «Հայ Երիտասարդին սպասումը հոգեւորականէն»:

Ապա տեղի ունեցաւ Կրօնական Ժողով: Առաջնորդ Սրբազան Հայրը եւ Զահանայ հայրերը զեկոյցներ տուին յառաջիկայ տանելիք աշխատանքներու մասին: Կատարուեցաւ Ազգային Երեսփոխանական Ժողովի եկեղեցական երեսփոխաններու ընտրութիւնը, եւ բանաձեւուեցան համագումարին կողմէ Ազգային Երեսփոխանական Ժողովին ներկայացուելիք առաջարկները:

Համագումարի վերջին բաժինով, նկատի առնուեցան յառաջիկայ ամիսներու աշխատանքներու գլխաւոր հանգրուանները եւ յատկապէս 2009 Երիտասարդական տարուան նոր ծրագիրներ:

Եզրափակիչ խօսքով, Առաջնորդ Սրբազանը գնահատեց համագումարին մասնակցող հոգեւոր հայրերը, կոչ ուղղելով բոլորին՝ դրական հոգիով ապրելու եւ բացարձակ բժախնդրութեամբ կատարելու իրենց վստահուած առաքելութիւնը:

Երեկոյեան ժամը 5:00-ին, վերջ գտաւ քահանայից համագումարը, «Աշակերտք Զրիստոսի», շարականի միատեղ երգեցողութեամբ եւ Առաջնորդ Սրբազանին «Պահպանիչ»ով:

## ANNUAL PRELACY CLERGY CONFERENCE

On Wednesday, May 13<sup>th</sup>, the annual Prelacy clergy conference, which traditionally takes place on the eve of the Representatives Assembly, was held at the “Yeghia Sarafian” hall of Holy Martyrs Church in Encino. The conference was presided over by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, with the participation of the clergy order. Former Prelate H.E. Archbishop Yeprem Tabakian and retired clergy members also participated.



The day began with services in the church followed by a spiritual meditation by the Prelate during which he reflected on the passage from 2 Corinthians in which the Apostle Paul advises to remain steadfast in our faith and exercise patience to receive the glory of God.

The conference convened at 11:30 a.m. with remarks by the Prelate who commended the service and devotion of the clergy members, and wished success to

the day's proceedings.

Archbishop Tabakian also delivered his remarks on this occasion, thanking the Prelate for the opportunity to participate in the conference and

extolling the importance of working together and uniting our efforts to achieve success in our service.

The Prelate then reviewed the past year's activities and presented the Religious Council report, which was analyzed by the participants and revised accordingly. In discussing the activities anticipated for this year, special attention was given to the celebration of the youth in response to His Holiness proclaiming this the Year of the Youth.

The session convened with a presentation by Very Rev. Fr. Barthev Gulumian on what the youth require from our clergy.

The election of religious delegates to the Representatives Assembly also took place and suggestions to present to the upcoming Assembly were drafted.

The conference closed with the Prelate's concluding remarks and benediction.

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Կիրակի, 17 Մայիսին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Փասատինայի Ս. Սարգիս Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ս. Պատարագին, եւ պիտի փոխանցէ օրուան յատուկ իր պատգամը:

### **PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT ST. SARKIS CHURCH**

On Sunday, May 17<sup>th</sup>, the Sixth Sunday of Easter, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at St. Sarkis Church in Pasadena.

During Divine Liturgy the Prelate will deliver his sermon to the faithful.

\*\*\*

## **ՎԱՐԴԱՆ ԵՒ ՍԻՐԱՆՈՅՇ ԳԵՈՐԳԵԱՆ ՊԱՐԱՐՈՒԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

Կիրակի, 17 Մայիսի երեկոյեան ժամը 6-ին, Լոս Անճելըսի Million Dollar թատերասրահին մէջ, տեղի պիտի ունենայ Վարդան եւ Սիրանոյշ Գեորգեան Միջազգային Պարերու դպրոցի ելոյթը: Ասիկա պարարուեստի վարժարանին տարեկան հանդէսն է:

Յայտագիրին մասնակցութիւն պիտի բերեն Ռոզ եւ Ալեք Փիլիպոս եւ Մեսրոպեան Ազգային Վարժարաններու, ՀՕՄ-ի Նայիրի Մասնաճիւղի շաբաթօրեայի, եւ Royal Academy պարարուեստի սաները: 3-էն մինչեւ 25

տարեկան հայ երեխաներ, պատանիներ եւ երիտասարդներ, անելի քան 500 հոգի, պիտի ներկայացնեն հայկական եւ միջազգային պարեր:

Յանուն Առաջնորդ Սրբազան Զոր, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի հոգեւոր հովիւներէն, Արժ. Տ. Աշոտ Զիւլ. Գամպուրեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան Զոր գնահատանքի եւ օրհնութեան խօսքը:

## **GEVORKIAN DANCE ACADEMY ANNUAL EVENT**

The annual performance of the Vartan and Siranush Gevorkian Dance Academy will take place on Sunday, May 17<sup>th</sup>, at the Million Dollar Theatre in Los Angeles.

The ensemble is made up of over 500 youth, ages 3 to 25. Participating in the program are the dance groups from Pilibos and Mesrobian Schools, A.R.S. Nairi Chapter Saturday School, and the Royal Academy Music and Art School.

On behalf of the Prelate, pastor of Holy Cross Cathedral Rev. Fr. Ashod Kambourian will attend and convey the Prelate's blessings.

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ԴԱԹԵԱՆ-ՄԱՐԻԱՄԵԱՆ ԿՐԹ. ԶԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԲԱՑՄԱՆ**

Երկուշաբթի, 18 Մայիսի յետմիջօրէի ժամը 5:30-ին, պաշտօնական բացումը տեղի պիտի ունենայ Դաւթեան Մարիամեան Կրթական Զաստատութեան նոր կեդրոնատեղիին, որուն հասցէն է՝ 440 W. Lomita փողոց, Կլենտէյլ:

Առաջնորդ Սրբազան Զայրը ներկայ պիտի ըլլայ բացման հանդիսութեան եւ պիտի փոխանցէ իր օրհնութիւնները: Սրբազան Զոր պիտի ընկերանայ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Կոմիտաս Զիւլ. Թորոսեան:

## **PRELATE TO PARTICIPATE IN THE OPENING CEREMONY OF DAVIDIAN & MARIAMIAN EDUCATIONAL FOUNDATION'S NEW CENTER**

On the afternoon of Monday, May 18<sup>th</sup>, the opening ceremony of the Davidian & Mariamian Educational Foundation new center will take place. The new office is located at the Pacific Avenue Education Center at 440 W. Lomita in Glendale.

The Prelate will attend the opening ceremony and will convey his blessings. Pastor of St. Mary's Church Rev. Fr. Gomidas Torossian will accompany the Prelate.

\*\*\*

## **ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԱՄԱՆԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ**

Հինգշաբթի, Մայիս 21-ին, Համբարձման տօնին առիթով, հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր, առաւօտեան ժամը 10-ին, Ս. Պատարագ պիտի մատուցուի Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

Ս. Պատարագը պիտի մատուցէ Օրէնճ Բաունթիի Սրբոց Բառասնից Մանկանց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Զրանդ Զինյ. Երեցեան:

Պատարագէն վերջ, Առաջնորդ Սրբազան Զօր հովանաւորութեամբ տեղի պիտի ունենայ Համբարձման ճաշկերոյթը, Կլենտէյլի First Congregational եկեղեցւոյ սրահին մէջ (2001 Canada Blvd., Glendale): Զիրընկալութիւնը ստանձնած են Տիկնայք Գոհար եւ Բեկի Սիւլահեաններ:

Համբարձման ձեռնարկը կազմակերպուած է Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինին կողմէ:

## **CELEBRATING THE FEAST OF ASCENSION (HAMPARTSOOM)**

Thursday, May 21<sup>st</sup>, is the Feast of the Ascension of our Lord Jesus Christ. In celebration of this Feast, Divine Liturgy will be celebrated at St. Mary's Church in Glendale starting at 10:00 a.m. The Prelate will preside over the Liturgy, which will be celebrated by Rev. Fr. Hrant Yeretzian.

Following the service, the traditional Hampartsoom luncheon will take place at First Congregational Church (2001 Canada Blvd., Glendale). The luncheon has been organized by the Prelacy Ladies Auxiliary and is being hosted by Mrs. Kohar and Mrs. Peggy Sulahian.

\*\*\*